



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 9/55-Ճ « 17 » 09 2023

ԴԱՍԸՆԹԱՅԸ ԿՐԿՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) «Ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգի 82-րդ կետը և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝


հրամայում եմ.

1. Դասընթացի կրկնումը կազմակերպելու համար սահմանել հետևյալ կանոնները՝
 - ա) դասընթացի համար սահմանված բոլոր բաղադրիչներից 0 կամ ոչ անցողիկ միավոր ստացած ուսանողը (եթե ստացած միավորների գումարը չի բավարարում պարտքերի մարման շրջանում սահմանված անցողիկ միավոր ձեռք բերելուն) կարող է մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը վճարովի հիմունքներով կրկնել դասընթացը և հանձնել քննությունը, եթե առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12 կրեդիտը,
 - բ) կիսամյակի ընթացքում դասընթացի համար սահմանված բոլոր բաղադրիչների գնահատմանը չներկայացած ուսանողի «ՉՆ» նիշը հավասարեցվում է 0 միավորին,
 - գ) դասընթացը կրկնելու համար ուսանողը կիսամյակի դասերի մեկնարկին նախորդող երկու շաբաթվա ընթացքում ներկայացնում է դիմում և վճարման կտրոն. վճարումը կատարվում է դասընթացի համար սահմանված կրեդիտների արժեքի չափով,
 - դ) դասընթացը կրկնելու թույլտվություն ստացած, բայց դասերին չմասնակցած ուսանողը կարող է հաջորդ ուսումնական կիսամյակներում վճարովի հիմունքներով կրկնել դասընթացը՝ բացառությամբ ավարտական կուրսի ուսանողների,
 - ե) դասընթացները կազմակերպվում են ինչպես առդեմ, այնպե՛լ էլ՝ առցանց (առդեմ ձևաչափով կազմակերպելու անհնարինության դեպքում),
 - զ) ուսանողը կարող է կրկնել դասընթացը ինչպես նույն մասնագիտական կրթական ծրագրի (ՄԿԾ), այնպես էլ ցանկացած այլ ՄԿԾ խմբի հետ, եթե դասընթացը նախատեսված է այդ ՄԿԾ ուսումնական պլանով, իսկ դասընթացի կրեդիտների տարբերությունը չի գերազանցում 25 տոկոսը,
 - է) առցանց դասընթացը կազմակերպելիս պետք է դասընթացի պլանը, դասընթացին վերաբերող ուսումնամեթոդական նյութերը և այլ անհրաժեշտ տեղեկատվությունը հասանելի

դարձնել e-learning.yasu.am ուսուցման կառավարման համակարգում (ՈԻԿՀ), իսկ դասավանդող դասախոսը շաբաթական մեկ անգամ պետք է առդեմ խորհրդատվություն տրամադրի ուսանողին:

2. Սույն հրամանը տարածվում է 2022/23 ուստարում և դրանից հետո ԵՊՀ ընդունված ուսանողների վրա:
3. Սույն հրամանի մասին իրազեկել ԵՊՀ ուսանողներին և աշխատողներին:
4. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ռեկտոր



Հ. Հովհաննիսյան